## Արձանագրություն N 2-4

### ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան — 12.05.2026թ.
ժամը 09:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հյուսիսյան
Է. Առուստամյան
Ա. Նալբանդյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ն. Ղազարյան

### 1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

--------------------------------------------------------------------------------
(Մ. Աղայանց)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցի՝ «Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 08.05.2026թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրա կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

### 2. Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

--------------------------------------------------------------------------------
(Մ. Աղայանց)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակիցների հայտերը գնահատվել է հետևյալ կերպ՝

| Մասնակցի զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանում | Գնահատման արդյունքում ստացած միավոր |
|---|---|---|
| **Ընտրված մասնակից** | «Ռիջիդ» ՍՊԸ | 83.9 |
| **Այդպիսին չճանաչված մասնակից** | «Վահրամ Կնյազյան» ԱՁ | 75.07 |

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ռիջիդ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Մ. Աղայանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------------------------- Մ. Աղայանց

Անդամներ՝

---------------------------------- Ա. Հյուսիսյան

---------------------------------- Է. Առուստամյան

---------------------------------- Ա. Նալբանդյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------- Ն. Նիկոլայան